

ԳԻՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ, ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՌՈՄԷՆ ՌՈՒԱՆԻ ՕՐՏՆԵՐԳԸ

«Ով գործում է բարությունը եւ ազնությունը ,
դրանով իսկ նա կարողանում է դիմանալ դժբախտությանը»:

ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵՌՏՈՎԷՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրապարակչությունը 2012 թ. Ամանորեայ հրաշալի նուէր մատուցեց հայ ընթերցողների լայն շրջանակին: Լոյս տեսաւ Ռոմէն Ռոլանի «Բերեռլէի կեանքը» մենագրությունը, թարգմանությունը ֆրանսերէնից՝ Պարգև Շահբազեանի: Փառք Կանք Աստուծոյ, որ մեր մշակոյթի Կրթաշէն գործիչ-մտաւորական, «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» եւ «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանների ասպետ, Վազգէն Վեհափառի 40 տարիների գիտական բարբուռը, Ս. Էջմիածնի Գեորգեան հոգևոր ճեմարանի հայոց լեզուի եւ արևմտաւրոպական գրականութեան վաստակաշատ դասախօս Պարգև Շահբազեանի հերթական գեղեցիկ թարգմանությունը վայելելու ուրախությունն ունենք: Նրա հրապարակչությունը բարձրաճաշակ գիրք է լոյս ընծայել: Գրքի ոսկերած գունատր շապիկի վրայ հանճարի դիմանկարն է, որը խորունկ հայացքով լսում է ի վերուստ պարզեւում երաժշտութեան հնչիւնները:

Գիրքը տպագրուել է թարգմանչի՝ Պարգև Շահբազեանի Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի երախտապարտ (բարձրաստիճան հոգևորական) սաների նուիրապրութեամբ:

Մեծանուն գրող, երաժշտագետ, հասարակական գործիչ Ռոմէն Ռոլանը (1866-1944) մեծ ազդեցություն է գործել ֆրանսիական եւ համաշխարհային գրականութեան պարմութեան վրայ:

Ամենամարդասէր անհայրներից լինելով՝ Եւրոպայի շատ նշանաւոր հասարակական ու մշակութային գործիչների հետ, Նոբելեան մրցանակի դափնեկիր (1915 թ.) Ռոմէն Ռոլանն իր բողոքի ձայնն է բարձրացրել Նայոց Մեծ Եղեռնի դէմ: Նա ըստ արժանւոյն է գնահատել հայկական ժողովրդական երաժշտությունը (1907 թ. յունուարի 13-ին Սորբոնում կազմակերպել է Կոմիտասի բանախօսությունն ու նրա գործերի համերգը), ըստ Ռոմէն Ռոլանի՝ այն «խորն է, ողբերգական եւ առնական՝ նոյնիսկ իր երազկոպութեան մէջ»:

Ռոմէն Ռոլանը համաշխարհային փառքի է արժանացել «Ժան Քրիստոֆ» (հ. 1-10,

1904-12 թթ., հայ հրապ. 1-5, 1937-48 թթ.) վեպով, որպեղ ըմբոստ և նորարար գերմանացի երաժշտի կերպարը օժտել է Բերթովենի բնավորության հայրկանիշներով, մարմնաւորել իր երազանքը սրեղծագործ հանճարի մասին, որը ձևաւորւում է բոնութիւնների դէմ մղած պայքարում:

«Ժան Բրիսպոֆ» վեպի հայերէն թարգմանութեան առիթով (հ. 1, էջ 3, 1937 թ.) գրած նամակ-առաջաբանում Ռոմէն Ռոլանը Նայասարանը երաժշտութեան առումով համեմարել է Իպսիլիայի հետ:

Երկրորդ համաշխարհային պարերազմի րարիներին հիւանդ, ընկերներից կտրուած Ռոմէն Ռոլանն ապրել է Վեգլում, բռնագրաւուած գօրում: Այդպեղ աւարտել է Բերթովենի մասին յուշագրական բազմահատոր երկը («Բերթովեն: Սրեղծագործական մեծ ժառանգութիւններ»): Նայ մրաւորականութիւնը Բերթովենի գործերին ծանօթացել է 1840-ական թթ.: 1888-ին Թիֆլիսում յոյս է րեսել Վ. Դ. Կորզանովի (Ղորղանեան)՝ կոմպոզիտորի կեանքին և սրեղծագործութիւններին նուիրում գրքոյկը: Նա առաջինն է ուսերէն թարգմանել և հրապարակել Բերթովենի նամականին (1300 նամակ), գրել է Բերթովենին նուիրում մեծածաւալ աշխարութիւն և ճանաչուել որպէս բերթովենագէտ: ԺԹ. դարի վերջին րասնամեակների հայ երաժիշտները հանդէս են եկել Բերթովենի գործերի կարարմամբ: Ռուսաստանում առաջինը դիրիժոր Կ. Սարաջինն է իրականացրել Բերթովենի ինը սիմֆոնիաների կարարումը (1911-12 թթ.): Խորհրդային Նայաստանում Բերթովենի սիմֆոնիկ սրեղծագործութիւններից առաջին անգամ հնչել է Երրորդ սիմֆոնիան՝ Ա. Ս. Սպենդիարեանի դեկավարութեամբ (1927 թ.):

Նրարարակում թարգմանութեան առթիւ իր «Երկու խօսք»-ում ՆՄ արուեստի վաստակաւոր գործիչ, արուեստագիտութեան թեկնածու, պրոֆեսոր Արաքի Սարեանը նշում է. «Կարդում ես... Պարգեւ Շահբաղեանի այս թարգմանութիւնն ու հպարտութեան խոր զգացումով նորից մրածում, թէ որքան բարձրագնայ, գեղեցիկ ու բարեւունչ է հայ լեզուն: Մեր հինաւորց լեզուին գերագոյնս րիրապելրած Պարգեւ Շահբաղեանն ի գօրու է եղել ԺԹ.-Ի. դդ. ֆրանսիացի գրողի մրքի, զգացումի, շարադրանքի ողջ խորութիւնն ու գեղարուեստականութիւնը ներկայացնել իր թարգմանութեամբ:

Անշուշտ սա դիրին գործ է... Ընթերցել օրարագգի գրողին քո հարագար լեզուով և լիովին մրնել նրա գրական աշխարհը, իր հերոսի՝ աշխարհի մեծագոյն հանճարներից մէկի՝ Բերթովենի ապրած րառապանքի ու յաղթանակներով լեցուն կեանքի սրրառուց զգացումներով և ընդհանրական մրքերով ներկայացում կենսագրութեան մէջ, յիրտի գեղեցիկ պարգեւ է հայ ընթերցասէր մարդուն, երիրասարդին: Լիովիզ Վան Բերթովենի կեանքը գեղարուեստորէն պարմուող ֆրանսիացի գրողի մենագրութիւնը Պարգեւ Շահբաղեանը լրացնում է կոմպոզիտորի կեանքի մանրամասներ ամփոփող հաւելուածով: Այսպեղ ամփոփում են Բերթովենի յայրնի Նայիգենշտաղեան կրակն ու նամականին, արուեստագէտ հանճարի էութեան պոթելում-մրածումները երաժշտութեան մասին: Առանձին հերաքրքրութեամբ են ընթերցում Բերթովենի սիրային նամակները, որոնցից առաջին ուրը վերջերս են յայրնաբերուել Բոնում և գրում են Բերթովենի անուան րում-թանգարանում: Թարգմանչի կողմից ճշգրտորէն ընրում փաստաթղ-

թերը, նամակներն ու մրաժույթներն առաել լիարժեք են դարձնում գերմանացի հանճարի իմաստուն էությունը, նրբագգայ մարդու հոգեկան այլազան ապրումների հարուստ աշխարհը:

Պարզև Շահբազևանի իրագործած Ռոմեն Ռոլանի «Բերթոլդի կեանքը» մենագրության թարգմանությունը կից յաւելուածով արդիական նշանակութեան աշխատասիրութիւն է՝ գրքում արձարծուած բարոյական բարձր նորմեր ընդգրկած իր արժէքով ու, նաև, այսօրուայ հայերէն լեզուի այս ու այն աղաւաղումները բացասող գրագէտ իմացութեամբ»:

1902-12 թթ. Սորբոնի համալսարանի երաժշտութեան պարմութեան դասընթացի պրոֆեսոր Ռոմեն Ռոլանը «Բերթոլդի կեանքը» մենագրութիւնը գրել է 1902 թ.:

Ներկայացուող գրքի նախաբանը հեղինակը գրել է 1927 թ. մարտին, ուր մասնաւորապէս նշուած է. «Բառորդ դար առաջ, այն ժամանակ, երբ գրում էի «Բերթոլդի կեանքը» վերնագրով իմ այս փոքրիկ աշխատութիւնը, չէի մրաժում բնաւ երաժշտագրական մի ուսումնասիրութիւն կատարելու մասին: Դա 1902-ին էր: Ապրում էի այնպիսի խռովայոյզ մի ժամանակաշրջանում, որը լի էր ամեն ինչ աւերող և վերականգնող ալեկոծութիւններով: Փախուստ էի րուել Փարիզից: Եկել էի րասը օրով ապաստան գտնելու իմ մանկութեան ընկերոջ մօտ, այն մարդու, որն արդէն բազմիցս զօրավիզ էր եղել ինձ կեանքի պայքարում. Դա Բերթոլդէն էր: Եկայ նրա մօտ Բոնն քաղաքը: Այնպեղ վերագրայ նրա սրտերը, նրա հին բարեկամներին... ներկայ եղայ նրա համալուագներին՝ նուիրում երաժշտական մի րօնահանդէսի... Եւ, մեն-մենակ նրա հեղ, Նոնոսի մառախապաղ ալիերին իմ ներքին ապրումներին անձնաւոր, ապրիւան խոնավ ու գորշ օրերին, ամբողջապէս համակում նրա վշտով, նրա քաջութեամբ, նրա րառապանքով և ուրախութեամբ, ծնկի իջայ, ապա վեր բարձրացայ նրա ուժեղ ձեռքով, որը մկրպեց իմ փոքրիկ նորածնին՝ մանուկ Ժան-Բրիսրոֆին իր օրհնութեան նշանով: Այնուեկտեղ, միւիրարում ու զօրացած, կեանքի հեղ մի նոր դաշինք կնքեցի և իմ ապաքինման համար Ասրծում ուղղում մի դանկեզանգ¹ երգելով՝ վերսրին բոնեցի Փարիզի ճանապարհը: Այդ դանկեզանգի խօսքերն են ահա այս էջերը»:

Մեծ գրողը ենթաղրել է, որ իր գիրքը կընդունուի նեղ՝ բարեկամների շրջանում, բայց «Ժողովուրդը յորացրեց այն,- շարունակում է հեղինակը,- դարձրեց իր համար հարստութիւն, որին չէր սպասում բնաւ այս փոքրիկ գիրքը: Այս օրերին Ֆրանսիայում միլիոնաւոր մարդիկ, ճնշում իղէալիսրների մի ամբողջ սերունդ անձկագին սպասում էին ազարարար մի խօսքի: Նրանք այդ խօսքը գրան Բերթոլդի երաժշտութեան մէջ և եկան թախանձանքով խնդրելու այն: Այս ժամանակում վերապրողներից ո՛վ չի յիշում համերգներն այն կուարքերների, երբ դահլիճները նմանում էին եկեղեցիների այն պահին, երբ կատարում էր Գառն Ասրծոյ մեղեդին, այն ցաւագին դէմքերը, որոնք հեղում էին պարարագին, և որոնց լուսաւորում էր Նրա յայրնութեան արարացուները: ...Մեր դարի առաջին րարիներին պարկանող այդ սերնդի շարքերը հնձուել վերացել

¹ Դանկեզանգ - գերմ. = գոհաբանական երգ:

են. պատերազմը դարձաւ մի անդունդ, ուր անհեղափոխական նրանք, ինչպէս եւ նրանց որդիներին լաւագոյնները: Բերթովէնի կեանքին նուիրուած իմ այս գրքոյկը պահպանում է նրանց պատկերը»:

Ռոմէն Ռոլանը 1908 թ. յունուարին այս գրքի նախաբանում գրել է.

«Աշխարհը խեղդում է: Բայց անկեր պատուհանները: Թողնենք, որ ներս մտնի ազատ օդը: Կրակներ հերոսների շունչը»:

«Աշխարհը խեղդում է»,- սրբի մեծ ցառով շեշտում է Ռ. Ռոլանը: Կեանքը կռիւ է, ամենօրեայ կռիւ, եւ մեծ գրողի ժամանակակիցների առօրեայ, «կեանքը» անցնում է կռուով ու քառապանքով:

«Եւ ահա այդպիսիներին օգնութեան հասնելու համար է, որ ես ձեռնարկում եմ իրենց շուրջը համախմբել հերոսանուն բարեկամներին՝ այն մեծ հոգիներին, որոնք քառապանքին մարդկանց բարութիւն անելու համար»:

Ռ. Ռոլանի համար հերոս չեն նրանք, որ յաղթանակներ են քոսում քարքեր բնագաւառներում, այդ թում մարտը ասպարէզում: Եթէ մեծ նկարագիր չկայ՝ չկայ հերոս, չկայ «մեծ մարդ», մեծ արուեստագէտը: «Կարեւորը մեծ լինելն է եւ ոչ մեծ երեսալը»: Իր «Նոյնական մարդկանց կեանքը» մենագրութիւնները գոռոզ փառամոլներին չեն նուիրուած, այլ՝ դժբախտներին:

«Կեանքի պարմութիւնն այն մարդկանց, որ փորձում ենք քաղ այսպէս, գրեթէ միշտ եղել է մի երկար մարտիքոտութիւն, - շարունակում է Ռ. Ռոլանը: - Թէպէտ ողբերգական մի ճակարագիր կռիւ կռիւն է նրանց հոգին ֆիզիկական ու բարոյական ցաւերի, թշուառութեան եւ հիւանդութեան սալի վրայ... Եւ եթէ նրանք մեծ են եղել իրենց ուժով ու եռանդով, ապա դա նրանից է, որ նրանք մեծ են եղել նաեւ իրենց դժբախտութեան մէջ: Ուրեմն թող շատ չգանգաւորեն այն մարդիկ, ովքեր դժբախտ են. մարդկութեան լաւագոյն մասը նրանց հետ է: Մոռենք նրանց արիւթեամբ: Նրանք կսփոփեն մեզ: Նրանց սուրբ հոգիներից դուրս է հոսում խաղաղ ուժի եւ հզօր բարութեան յորդառաք մի հեղեղ:

Ներքսական այս փառանքի մէջ, ամենավերելում, եւ առաջին քննութիւնը քաղաքի եւ մարքաւառքի Բերթովէնին:

Ներշնչունք նրա այս խիզախ խօսքից: Նրա օրինակով վերակենդանացնենք մարդու հաւատը կեանքի եւ մարդու նկարմամբ»:

...Բերթովէնի հոգուն յարուկ էր մարքակրօնութիւնը. անպարկեշտ խօսակցութիւններն ու լայիք մարքերը զգուհի էին պարծառում նրան: Սիրոյ սրբութեան մասին նա ունէր անխախտ համոզմունքներ: Ասում են, որ նա Մոցարտին չէր ներում այն բանի համար, որ նա արարատել է իր հանճարը՝ գրելով Դոն Ժուան օպերան: Շինդլերը, որը եղել է Բերթովէնի մտքի մարտնչական, հաւատում է, որ «նա իր ամբողջ կեանքն անցկացրել է կուսական մարքութեամբ՝ առանց երբէք մեղադրելու իր անձը բարոյական թուլութեան մէջ»:

*** Սիրելի՛ Բերթովէն:

Քիչ չեն նրանք, ովքեր ներքողել են նրա արուեստի մեծութիւնը: Բայց նա շատ անելի է, քան առաջինը երաժիշտների մէջ: Նա ժամանակակից արուեստի ամենահերոսա-

կան ուժն է: Նա մեծագույն և լուսագույն բարեկամն է բոլոր նրանց, ովքեր փառապան են ու պայքարում: ...Նրա անձից դուրս է ժայթքում վարակիչ մի բաջություն, պայքարելու երջանկություն, հարբեցնող այնպիսի մի գիտակցություն, որն իր մեջ զգում է Աստծուն: Թույլ է, թե բնութեան հեղձ մշտապես հաղորդունակ՝ նա ի վերջոյ իրացրել է նրա խորագրյն գործությունները: ...Իսկ նրա մարմին բարեկամ Շինդլերն ասում է. «Նա փրկացաւ բնութեան ոգուն»: Դա ճիշդ է. Բերեռլինը բնութեան մէկ ուժն է. նրա փառերային գործութեան և բնութեան մնացած ուժերի միջեւ մղուող պայքարի այդ փեսարանն ունի հոմերական մեծություն:

Նրա ողջ կեանքը նման է փոթորկաշունչ մի օրուայ: Սկզբում վաղորդեան պայծառ ու ջինջ մի առաւօտ: Նազի մի քանի նուաղկոյր ու թոյլ շնչառություններ, բայց արդէն անշարժ օդում թաքուն մի սպառնալիք, ծանր մի նախագագացում: Յանկարծակի անցնում են մեծ սեւ ամպերը, և լսում են Ներոսական սիմֆոնիայի և Դօ միւրի ողբերգական որդերները, շշջացող ահարկու լռություններն ու քամու կապաղի հարուածները: Սակայն դեռնա վրայ չի հասել պայծառ օրուայ մաքրությունը: Ուրախությունը մնում է ուրախություն. փրկությունը իր մեջ միշտ պահում է մի յոյս: Բայց 1810-ից յետոյ հոգու հաւասարակշռությունը խախտւում է: Լոյսը դառնում է անսովոր: ...Յաճախ երաժշտական գաղափարը մատախուղի միջից մէկ կամ երկու անգամ դուրս գալուց յետոյ, խնդդամահ եղած, անհետանում է ամբողջովին: Երաժշտական հարուածի վերջում այդ գաղափարը կրկին դուրս է գալիս միայն մի հողմամբրիկի միջոցով: Ուրախությունն իսկ սրացել է բուռն և վայրագ բռնոյթ: Սաստիկ մի փրկող, մի թոյն է խառնում բոլոր զգացումներին:

Ինչքան մոթն իջնում է, այնքան կուրակում է ամպրոպը: Եւ ահա՝ փայլակներով ուռած, գիշերային խաւարով պարած, փոթորիկներով մեծացած ծանր ամպերը, որոնցով սկսում է Իններորդ սիմֆոնիան: Յանկարծ, փոթորիկի ամենաուժեղ պահին, խաւարը պարտում է, գիշերը՝ հալածում երկնքից, և լուսատու օրուայ անդորրը վերադարձւում է մեզ կամային հսկայական մի ուժով: Ո՞ր յաղթանակը կարող է համեմատուել սրա հեղ, Բոնապարտի ո՞ր ճակարամարտը, Աուստրիացի ո՞ր արեգակը կարող է հասնել գերմաղկային ջանքերով ձեռք բերուած այս փառքին, այս ամենափայլուն յաղթանակին, որ երբեւէ փարել է Ոգին: Մի դժբախտ աղքատ մարդ, անգոր և միայնակ մի մահկանացու, վշտի կենդանի մի մարմնացում, ում աշխարհը մերժում է ուրախությունը, հէնց ի՞նքն է սրելոծում Ուրախությունը, որպէսզի այն նուիրի աշխարհին: Նա այդ ուրախությունը դարբնում է իր փառապանքով, ինչպէս նա դա ասել է իր այն հպարտ խօսքի մէջ, ուր ամփոփում է իր կեանքը, և որը նշանաբանն է հերոսական հոգու փրկ ամեն մարդու.

«Ուրախություն Տառապանքի միջոցով»:

Վերջապէս, հշենք, որ բազմավաստակ թարգմանիչ Պարզեւ Շահբազեանը սրելոծագործական անսպառ ավիւնով շարունակում է ուրախացնել մեզ Ֆրանսիայի դասական հեղինակներից ընտրովի կարարուած իր նորանոր թարգմանություններով:

ՍԵՂԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ